


ՏՆՕՐԵՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ՄԱԳԻՐ
Mourour, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Basar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիաթսի համար օրեկն. ողջ դճ. 80
Սեպտեմբեր 50
Օտար երկիրներ տարեկան Զրաճ 25
Սեպտեմբեր 14
Քրիստոսի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուի:

ԿԵԱՆՔԻ ԶՕՐԱՎԻԳՐ

Վերջերս, Պրանսա, գիտնական շրջանակ-
ներու մէջ պատահած դէպք մը կրնայ իրա-
ւունք տալ, յուսանք՝ գէթ բացատրար՝ ա-
նոնց որ կը քարոզեն թէ ստացական կրթու-
թիւնը անգործ է յաղթել ժառանգական բնա-
ւորութեան: Ահա՛ իրողութիւնը:

Գեկտեմբեր ամսուան մէջ Պրանսայի բը-
ժշկական վարժարանի ուսուցիչ մը ամբաս-
տանութեամբ թէ այդ հաստատութեան գրա-
դարանէն իր անձին սեփականացուցեր է քա-
նի մը գիրք, քանի մը թերթ, և ասոնցմէ
զատ մէկ քանի հատ ալ բոյս. երիտասարդ
ուսուցիչը պարզապէս իրր գող ամբաստան-
ութեամբ, և Համալսարանի Խորհուրդը անոր
պաշտօնանկութիւնը որոշեց. ուսուցիչը հը-
ժարական տուաւ: Սակայն խնդիրը ասով չի
վերջացաւ. ոչ ոք կրնար ըմբռնել այսպիսի
գողութեան մը շարժառիթը: Ուսուցիչը հա-
զիւ 28-29 տարեկան և արդէն Պրանսայի գի-
տութեան մեծ յոյսերէն մէկն է. ինք նիւ-
թական վիճակին կողմէն ո՛ր և է նեղութեան
մէջ չէ, ընդհակառակը բաւական ալ հա-
րուստ է. իսկ գողութեան առարկան հազիւ
10—15 ֆրանքի գումարի մը կրնայ հասնիլ:
Գաղտնիք մը կար այստեղ, և սակայն «գեր-
յարգի» գիտուններ որոնք ո՛ր և է կրքի են-
թարկուելու կասկածանքէ ազատ էին, միա-
ձայնութեամբ բժիշկ ուսուցիչին մեղսապար-
տութիւնը վճռած էին: Գաղտնիքը ահա ե-
րեւան կելլէ: Ուսուցիչը՝ Պ. Հայմ՝ անհրաժեշտ
ապացոյցներ ժողոված է հաստատելու համար
թէ սոսկալի զրպարտութեան մը զոհ գացած է:
Ամբաստանութիւններէն մէկը և անոր արդա-
րացումը կրնայ գաղափար մը տալ դարձուած
մեքենայութիւններուն վրայ: Բժշկական վար-
ժարանին նուէր խրկուած գիրք մը կը գըտ-
նուի Պ. Հայմի տունը, անոր գիրքերուն մէջ.
մարդը կը պնդէ թէ այդ գիրքը իրեն նուէր
եղած է և ոչ թէ վարժարանին: Դժբաղդա-
բար գրքին առաջին երեսէն պատուաւոր էր
հեղինակին ձեռագիր «ձօնը»: Արդ շատ պարզ
էր հետեւցնել որ եթէ այդ ձօնը տրեթ. Հէյմի
նուիրուած ըլլար, բնականաբար զայն պա-
տըւտելու հարկ մը պիտի չի մնար. բայց ո-
րովհետեւ դպրոցին է նուիրուած, ուստի և
գողօնը ծածկելու համար անբարեխիղճ ու-
սուցիչը խոհեմութիւն համարած է ջնջել ձօ-

նը: Բայց ահա ճշմ. Հայմ՝ իր թուղթերուն
մէջէն կը գտնէ այն նամակը որով հեղինակը
իրեն կը ծանուցանէր այդ գրքին իրեն նուի-
րած ըլլալը: Ասոր նման ալ ամէն մէկ ամ-
բաստանութեան հերքումները կը ժողովէ ու
հիմա Հանրային կրթութեան խորհուրդն է որ
գործը կը քննէ: Բայց ենթադրեցէք թէ հե-
ղինակին այդ նամակը կորսուած ըլլար և ահա
ամենածանր ամբաստանութիւնը կը մնար խեղճ
ուսուցիչին վրայ:

Բայց ինչո՞ւ այդ զրպարտութիւնները,
որոնք են զայն դարձնողները: Ըսուած է թէ
ամէն բանի մէջ «փնտռեցէք կինը» — սակայն
նախանձը՝ կինը կարելի է ողորդել. նախանձը
ոչ է Համալսարանին բռնաճնջումներէն մէկն է
որ իր փոխանորդին, agrégéին դէմ այդ դա-
ւը լարած է: Տօքթ. Հէյմ հազիւ 23 տարե-
կան կարող եղած է այդ մեծ պաշտօնին
հասնիլ. իսկ բռնաճնջումը տառնեակ տարիներ
սպասելէ յետոյ միայն կրցած էր agrégé ըլ-
լալ: Ու իր ուսուցչին մահէն յետոյ միայն,
իբր «անդրանկութեան» իրաւունքով ա-
նոր յաջորդել է Բայց մեծ արժանիքը ճշմ.
Հէյմինն էր. ամենուն աչքերը անոր վրայ
յառած էին. և ահա նախանձաբեկ ուսու-
ցիչը համբերատար ոգով կը սարքէ խել մը
մեքենայութիւններ, կը լարէ դաւեր, ատոնց
մէջ կը բռնուի խեղճ գեր-ուսուցիչը, չ'գիտնալով
թէ ինչ կը գառնայ իր շարժը:

Արդարութիւնը միշտ չի պարտուիր, ու
երբ կը յաղթանակէ «վա՛յ պարտեալին» գո-
չելու է այն ատեն: Պրանսայի մամուլը որ
«գերաւեծար» ուսուցչներէն խաբուած էր,
հիմա կը բռնկի ու բազմազոյ ձայնով կը յար-
ձակի սողուն բռնաճնջումներէն վրայ:

Եւ սակայն այս ամենուն բարոյականը
այս է թէ գիտութիւն, ուսում, տարիք ան-
զօր կըլլան փոխել բնաւորութիւնը: Այդ բո-
լոր պատկառելի անձնաւորութիւնները ցնծու-
թեամբ ողջունած էին զրպարտութիւն մը որ
կրնար ճշակտուր ընել համբաւ մը որ սկսած
էր մեծնալ ու օր մը հաւասարիլ էն մեծ
անուններուն:

Այս ամէնը մարդո՞ւ շատ գէշ յոռետե-
սութեան կրնար մղել, եթէ վերջնական յաղ-
թանակը չի մնար ճշմարտութեան:

Չի յուսահատինք երբեք գերագոյն ար-
դարութենէն: Կեանքի զօրավիգը ա՛ն թող
ըլլայ:

ՆԱՄԱԿ ՍՈՒՏԱՆԷՆ

ՀՐԱԻԷՐ ՄԸ

Բ.

1896 Յուլիս 1ը տխուր օր մ'էր ինձ համար:
Ամառուան այն հրատապ եղանակին, որովհետեւ
ըլլալով՝ ոտք կը կոխէի Վատի-Հալիս: Հետեւէն
իսկ սիրտս կը տրոխէր, ինչպէս նախազգուշացնե-
րուս...: Քանի դառն է ապաքին, հայ շրջաննե-
րու մէջ մեծցած զարգացած երիտասարդի մը հա-
մար, ազգային այն սրտատրուի օրերուն մէջ՝ հե-
ռուն գտնուիլ, առանց հայրենակցի վրէժ դատա-
կարգի ալ պատկանէր տեսակցութեան: Օտարը միշտ
օտար է. ինչքան լեզուագէտ ըլլաս և որքան ալ
ուժգին ըլլայ անոր զգայնութեան ջերմազափը, ինչ
կը հասկնայ չուկայի յոյնը, վաւառտ արարը, զօ-
րական անգղիացին, հայուն վշտաբեկ սրտին նուրբ
թերթէն ու հոգւոյն խոր խաւերէն: Ո՛հ, երբ երեք
աւիւր վերջ՝ հայրենակցի մը — այն ալ վիսով հայա-
խօս — երեսը տեսնելու բազմիշտ ունէի, իբր նոր Զա-
բարիս, նորահրաշ թոթովումներ զգայի լեզուիս
վրայ. մայրենի լեզուն վայրկեան մը օտար թուեցաւ
ինձ: Ու կը ցաւէի. կը ցաւէի թէ ինչո՞ւ մենք, գաղ-
թական ժողովուրդ, ուրիշներու չափ չըլձայեաց
եղած չենք գտնուած. միշտ պէ՞տք էր որ աչեր-
նիս յառած ըլլայինք կեղծոններու շահերուն վրայ,
չէ՞ մի որ մեծ շահերը պէտք է թլչ մ'ալ փնտռել
Սուտանի դաշտը, ի հեճուկս բոլոր սպառնալից վտան-
գներուն:

Հիմա, սակայն, որ երբեմն երբեմն հայրենակց-
ներ հիւրասիրելու հաճոյքը կուենամ և ուրախու-
թեամբ հետաքրքրութիւն մը կը նշմարեմ՝ մեր Գա-
հրէթանակ ազգայիններու կողմանէ Սուտանի վե-
րաբացման առթիւ, հրաւեր կը կարգում անոնց, որ,
բաբէ՛, իրենք ալ գան, օգտուէ՛ն: Կուցի՛ այս հրա-
ւերը քիչ մը կանուխէն ըրած ըլլալ, բայց միշտ
փարսնած էի, ինկատի առնելով անցագիր հայթայ-
թելու խոչնդոտները, տաքերը, օրերով ուղիով բա-
լելը, ապրանք փոխադրելու դժուարութիւնները,
հայրենակցներուն տրամադրութեան անգիտակցու-
թիւնը, և վերջապէս առած մը, որ շատ կը գոր-
ծածուի Հայաստանի գաւառներուն մէջ նշանախօսու-
թեան մը պահուն, օպատճառ ըլլալը լաւ բան չէ՞:

Ո՞վ է որ խանդավառութիւն մը զգայ այս
հրաւերին հանդէպ:

— Յուսահատ գալթուկոնը, բնականաբար, ան-
կուտ արհեստաւորը և առ առաւելն աննշան դրա-
մագլուխ մ'ունեցողը:

Հապա դրամատէ՞րը:

Ե՛հ, անի իր հարստութեան աւելորդողն ալ
գոհ ըլլալ գիտէ, դեղնորակ մետաղին փափկահիւս
դափնիններուն — պսակք բազմամեայ աշխատութեան
— վրայ հանգչած: Ինչ հարկ հեռուները երթալ,
կեանքը ինքնին կարճ է արդէն. արժէթղթերը իր
փայլուն խոհանրի և մենք պապէն կտակուած յաւի-
տենապէս անփոփոխ արհեստը՝ իր նուիրական քա-
ժինը չե՞ն միթէ, հոգ չէ թէ աղէկ ինք միայն
կրնայ օգտուիլ. անձնական նկատումները առաջ են
ազգասիրական պարտականութենէն: Եթէ դրամա-

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Թանկ յունուար 5-ի թիւին մէջ կը կարգանք .

«Հնչակեան կուսակցութեան Լոնտոնի կեդրոնական գովիթէն նամակ մը ուղղած է մեզ՝ հերքելու համար մեր դեկտ. 11-ի յաւելումներն (Բրքի Թան) մէջ երեւցած այն լուրը իբր թէ այդ գովիթէն մասնակցութիւն ունեցած ըլլայ Օրմանեան Պատրիարքին և Տատեան Արթին փաշայի կենաց դէմ դաւադրութեան մը մէջ : Իր հերքման պիտի կը պարունակէ նաեւ հետեւեալը .

Կուսակցութեան ընդհանուր ժողովը գումար ունեւոր անցեալ տարի (1896) ի Լոնտոն, Նազարէկեան նախկին գովիթէին տեղ ընտրեց նոր փարչութիւն մը, բարեփոխելով կուսակցութեան յարաբերութիւնը և սարսափեցնելով ո՛ր և է գործողութիւն կամ սպառնալիքեան վրո՞ւմ որ կրնայ փոխել ազգին շահերուն :

Թան շնորհաւորութեան արժանի կը գտնէ կուսակցութեան այս նոր ուղղութիւնը :

—Ի Պոլսէն կը հեռագրեն իտալական թերթերուն թէ աւստրիական դեսպանատունը հարկադրուեց է նորանոր դիտողութիւններ ուղղել Պրան՝ այն թշնամական ընթացքին պատճառաւ զոր Մէրսինի թուրք իշխանութիւնը կը բռնեն Լոյտի գործակալ Պ. Պրա-ճաֆօյի դէմ, ինչպէս նաեւ այն յարգանաց պակասութեան պատճառաւ զոր կունենան քաղաքին աւստրիական դեր-հիւպատոսարանին նկատմամբ :

—Նիւ Եօքէն Քէօյնի Ջաքսոնի ուղղուած հեռագրական տեղեկութեան մը նախելով, Միացեալ Նահանգաց հանրապետութեան նախագահ Պ. Մար Քլինթ մտադիր է մեծագումար հատուցում մը պահանջել թուրք կառավարութեանէն, ամերիկացի միսիոնարներուն արտաքսման ինչպէս նաեւ Անատոլի մէջ անոնց հաստատութիւններուն կրած վնասներուն համար : Մերժման պարագային մէջ, ամերիկեան կառավարութիւնը նաւատուր մը պիտի զրկէ եղբի Փոքր-Ասիոյ ծովերը, իր պահանջման ուժ տալու :

—Կ. Պոլսոյ մէջ ռուսահայ յեղափոխականներու ներկայութիւնը կը ծանուցանեն նորէն եւրոպական լրագիրներէ ոմանք :

—Ռուսիոյ մէջ կայսերական ռազմով արտոնութիւն տրուեց է՝ հանգանակութիւն կատարել Կրէտէի կարօտեալներուն ի նպաստ : Յունվար 8-ին գերմանական Օյսէնպուրկ մարտանաւը Հանեա հասնելով, քսան զինուոր ու երկու սալայ ցամաք հաներ է :

—Եպարքոսական փոփոխման լուրերու արձագանքներ կը հասնին Կ. Պոլսէն : Պաշտօնական զրոյցին նայելով, կըսէ Բոսիլի, արդի Սատրապան՝ Խալիլ Բիֆաթ փաշա՝ պաշտօնէ քաշուել կողմէ իր ծեր հասակին ու չափազանց յոգնութեանը պատճառաւ : Ուրիշ զրոյցի մը նայելով, այս մօտաւոր հրաժարման շարժառիթ կը նկատուին Մահմա ձէլալէտուն փաշայի մեքենայութիւնները որ կողմէ եղբի ձեռք ձգել Բիֆաթ փաշայի յաջորդութիւնը : Տարակուսելի է սակայն որ Սուլթանը այս վերջինը կողմէ այդ պաշտօնին, վասնզի ժողովրդականութիւնը չունի :

գլուխը հազարը անցած է, հարուստ մ'է նա արդէն. արխտորաթիւրական հովեր առնուլ կը միտի, և իրմէ ստորակարգ դասուն հետ առնչութիւն ունենալ չի սիրեր այլ եւս. ազգին ջողերէն է : Եսա սիրութիւն մ'ունի, խառն սառնաման անտարբերութեամբ, որուն խառնասիրութեան հասնելու համար պէտք է շատ խորերը թափանցել գիտնալ. քիչ կը խօսի, լուրջ երեւնալու հոսար, սիգանեմ քայուածք մ'ունի, պարծանք իր հրապարակի հանձարին. Պոլսոյ գեղանի աղջիկներուն նման ալ հեղնոտ ժպիտ մը շուրթերուն վրայ, եթէ երբէք իրեն հետ տեսակցելու պատիւն ունենաս, և որուն հանդէպ, եթէ զգայուն ես, կզգաս թէ Աստուած տարբեր մարդ ստեղծած է քեզ : Ինք դրական մարդ՝ sentimental ըլլալ, բարիք ընել, պարգապէս խնդրութիւն ըսել է. դուռներք գլխալ, կարեկցի կը սիրէ, այն ալ թերեւս փառասիրութեան համար. բայց, եթէ պատահի որ օր մը, կամ ազգասիրութեան (*) թելադրեալ և կամ խաթեբ համար դրամական փոխառութիւն մը ընէ խեղճուկ հայ աւարածի մը, և այդ բարի մարդուց, կամ ապէրախտութեամբ և կամ գործի անջնջողութեամբ չկարողանայ պարտահատոյց ըլլալ, անվստահութիւնը այլ եւս իր գագաթնակէտը հասած է, ու ուխտ մը կընէ, ուխտ մը դից, կը լսէք, անյեղի, անփոխ, խելի, անդառնալի, որ մէյ մ'ալ ապերախտ հայուն աղէկութիւն չընէ, պարտաճանաչ ըլլայ թէ պարտազանց, պարկեշտ թէ անպատիւ : Ահա մեր դրամատէրը . . . :

Բայց կատակը մէկդի. մանաւանդ որ այս կծու բնադատութիւնները՝ որչափ ալ անուղղակի՝ մեր մէջ, մենք դեռ տղայ ժողովուրդ, աւելի չարիք կը անուցանեն քան թէ բարիք : Եթէ միայն մի բանի բացառութիւն կազուրկ պատուարծան «եան»եր այսպէս սահմանափակ ապրիլ սիրէին, ի՞նչ մեծ վնաս այն ատեն իրենց և ազգին համար, և ո՛ր այն ատեն, կը հարցնեմ, պիտի փնտռէիք դուք ձեր օրապահի կը, խեղճ հայ գործաւորներ :

Խօսքս չէ թէ մեր վաճառականները իրենց դրողութիւնները թողուն և Սուտան գան, այլ ջերմ փափագս է որ գործակալներ ունենան, քիչ մը հոս քիչ մը Հապէշիստան, ուր արդէն հայ գաղթականներ կան. երթան ուսումնասիրեն երկիրը և տեղւոյն առեւտրական գործերը, ու ջանան հաղորդակցութեան մտնել իրենց վաճառատանց հետ : Այսպէսով թէ իրենք օգտուած կըլլան և թէ պարագայից համեմատ մեր եղբայրներէ անոնք որ, դեռ երէկ մեզ պէս դիւրակեցիկ, խիստ այսօր, ո՛հ, մուրացկութեան դժնդակ հարկին մատնուած, տրտմազիւ աչօք մեզ կը նային, մեղմէ շատ բան կակընկալեն. մեր պարտքն է գործ ձարել անոնց, և ոչ ողորմածասիրութեամբ զանոնք ծուլութեան վարժեցնել :

Կարելի է որ այս առաջարկի գործադրութիւնը փափաքուած արդիւնքը չունենայ առաջին տարին. պէտք է բնականաբար քիչ մը սպասել գիտնալ մանաւանդ այս կողմերը որ առիթի տեղեր են :

«Եթէ տարին երեք ամիս, կըսէր երէկ հայ բարեկամներէս մին, անցեալ ամիսներու պէս գործ ընեմ» ինձ կը բաւէ, և այս շտապ ճշմարիտ է :

Լրագրական սահմանէն չեղած պիտի ըլլայ եթէ վաճառքներու տեսակները ամբողջովին յիշել ուզէի. այն է քիչ մը ամէն տեսակ ուտելու, խմելու, հագնելու տարականոց, բայց ի շղարշեայ, մետաքսեայ արդուզարդերէ սպիտակամորթ փափկամարմին ունեւոր համար որոնցմէ, ո՛հ, զրկուած են խեղճ անապատաբնակները :

Առեւտրական գործերէ դուրս կան նաեւ ուրիշ խել մը շահաբեր բաներ զորս գործի մարդիկ ապահովապէս աւելի լաւ կրնան հասկնալ. ինչպէս հոգեր վարձել, սառույցի և ջրահանութեան նոր մեքենաներ ունենալ, արմաւենիի ծառեր գնել ևն :

Ճամբորդութեան մասին հիմա ուղղակի Սուտան քիչն ալ կրնայ երթցուիլ մինչեւ Պերպէր և այս ճամբան ամենէն յարմար և ամենէն կարճն է : Նոյնպէս Աստանէն և Վատի-Հաֆան ասղին անցնելու համար մեծ դժուարութիւններ չկան հիմա : Բարեբաղդաբար, երկաթուղին ալ, երկու կողմանէ, ցնոր տնօրինութիւն, բայց է հասարակաց երթեւեկութեան և ապրանսայ փոխադրման :

Անպաշտօններուն աչքը լոյս :

ՍՈՒՏԱՆՅԻՆ

Հ Մ Ա Յ Ա Թ Ա Փ

ՊԱՅՏԻԿ ԲԱՅՅ ԶԵՄԱՐԻՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Անցորդիկ

Ժամանակ մը եղաւ, սիրելի Անցորդ, որ սէրս թեւիս տակ զտրկած իրեն կը հետեւէի Շահատէ Պաշին Պատըգեղ և Իւսկիւտարէն Օրորայի պարտէզը : Յիմարութիւն մը, եթէ կուզես, բայց առաւանկ էր :

Հայ դերասանական խումբը, Քառմէնը թուրգմանած էր և իմիրս, Քարա, crée ըրած էր Քառմէնի դերը :

Գէշ կը խաղար բայց ազէկ կը հագուէր, ինչ որ մեծ յատկութիւն մըն է կնկան մը համար :

Ամեն ներկայացման ծաղկեփունջեր և fondantներ կը զրկէի իրեն. յիմարքէն սիրահարած էի, ըսելիք չի կայ և տարփանքս այնքան առաջ գացած էր որ ա՛լ գործ, գրագում, ընտանիք, ամեն բան մէկ կողմ դրած, իր փէշերուն անուշաբոյր շուրջին մէջ ինքզինքս կը կորսնցնէի քանի մը ամիսներէ ի վեր :

Ի՞նչ նամակներ, ի՞նչ ոտանաւորներ գրեցի իրեն, երբեմն փաքիկ ընծաներ և ստէպ մեծ ծաղկեփունջեր զրկելով իրեն, և իմ այս սէրիս մէջ այնքան առաջ գացած էի որ օր մը քիչ մնաց պիտի խեղդուէի . . . պարտքի մէջ :

Եւ այս ամենուն փոխարէն : Գատըգեղի մէջ ժպիտ մը, Իւսկիւտար անհարկ մը և Օրորայի մէջ բարեւ մը, ահա ինչ որ կրցած էի անցընել actif-ի կողմ իմ սիրային կրկնատուարին : Բայց համբերե՛ք զիտէի, Անցորդ, և սիրուեք մը ունէ՛ր՝ այն է թէ սէր մը սկսելու համար պէտք է սպասել եւ յուսալ. նշանաբան մը զոր Տիւմա կը գործածէր բօման մը վերջացնելու համար :

Եւ մեր սէրը, այսինքն իմիս այսպէս կը շարունակէր :

Քարա շաքարէր երեք անգամ Պիպի գործը կը սպաննէր և ես կամայ կամայ ինքզինքս :

Բայց հակառակ այս ամեն ըսածիս, Մնակեանի prima-donna-ն էր դարձրել տխրութարեր պատառ մը ըլլալէ :

Իրիկուն մը, Շահատէ-Պաշին թատրոնին մէջ երկրորդ արարուածի միջոցին աչք ըրաւ որ ներս երթամ :

Յայթութիւն :

Տաս փայտեան ետքը իր խուցէն ներս կը մտնէի : Փափկամարմին Քլանտոյր, խաղարկութիւններու փայրկեանն էր :

Ի՞նչ ըսիր իրարու, աղէկ մը չեմ յիշեր և վերջապէս դուն գիտնալու ես թէ այդ փայրկեանին ապահովապէս արեւելեան խնդրոյն վրայ չի խօսեցանք :

Հոգեբանական վայրկեանը վերջապէս հասաւ :

—Գոնէ պաշիկ մը, աղորիկ Քարա :

—Այս գիշեր չըլլար . . . ախ կերած եմ :

Եթէ թատրոնը վրաս փչէր աւելի աղէկ չէ՞ր ըլլար, ըսէ՛, Անցորդ :

ԲԱՅԱՄԻՔ

Ա Յ Ժ Մ Ե Ո Ւ Թ Ի Ի Ն

ՋՕԼԱՆ ՈՒ ԻՐ ՇԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ

Եթէ ժրանսական Ակադեմիկն Ջօյան իր անդամակցութենէն մերժեցաւ գոհունակութիւնը ունեցաւ այսպէս աւետէ ի վեր, Խորհրդարանը աւելի մեծ գոհունակութիւն մը կը զգայ՝ նմանին հեղինակը դասի ենթարկել ճշտով : Տրէյմիսի խնդրին առաջ քաշած կրֆոս յուզումը ու հակառակութիւնները ինչ եղի ալ որ յանգին, զարմանք չի պիտի պատճառեն այլ եւս. ասով հանդերձ, անակնկալ մըն էին երեկուան հեռագիրները՝ ծանուցանող թէ նախարարապետ Պ. Մէլիկ, ծափահարութեանց մեջեջ յայտարարեց եւ երեւի. Ժողովին թէ Էմիլ Ջօյա դասի պիտի ենթարկուի : Բնապաշտ դպրոցին

պետք որ ինքնաբեր շարժումով մը ու գրա-
գետի անշահախնդրութեամբ առաջ անցած
էր այս խնդրին մէջ, պահարկելով իր երկ-
րին պետական մարդիկներուն եւ մասնաւոր
մէկ մասին կեղծաւորութիւնը ու կոտակ-
ցական ընթացքը, Օռօն լրագրին մէջ քաց
նամակ մը հրատարակած էր՝ Հանրապետ-
րեան նախագահին ուղղեալ՝ անբասանե-
լով ինչ Բարիքի քր Քրաւ գնդապետին իբրեւ-
դիմակ Տրէյքիսի նկատմամբ գործուած
«դատական սխալին» կառելցումներ քե՛ս
սիւն, Պիլիօ եւ քր Պուսեմէր զօրավարներն
անոր մեղսակից են. քե՛ս պատերազմական
կրկին ասեաններն ալ որոնք դատեցին այս
գործը, քերացած են իրենց պարսկականու-
թեան մէջ:

Այս հրատարակութեան հետեւանքը եղաւ
հարցապնդում մը ընդդէմ Զօրայի եւ վրս-
ահութեան քոնէ մը ի նկատման նախարարու-
թեան, մինչ անդին՝ Ծերակոյցին մէջ, Պ.
Շէօրէր-Քեպրնէր կը կորսնցունէր իր դեր-
նախագահի արողը, 80 քոնէ միայն ստա-
նալով ու չի կրնալով վերընթանալ:

Ամեն անոնք որ ասելով ինքնաբեր ունին
Լուրի հեղինակին դէմ, կեղծ-քառեպաշ-
ներ, ճշմարտութիւնը համարակ չեն խորս-
նոյններ, պարկեշտութիւնը կեղծաւորութեան
հետ շփոթողներ, առիթը յարմար սեպեցին
իրենց գոռում գոյումին ու յարձակումնե-
րուն զակ ընկձել փորձելու համար մեծա-
նուն վիպասանը՝ որուն քոյրը յանցանքը
եղած է արդար ու անսխալ ինքնութիւն մը
պահանջել այս խնդրին մէջ: Անհաւանական
չէ որ ինչպէս անպարս հոշակեցին էսքե-
րագի զօրավարը անանկ ալ յանցաւոր ցու-
ցունեն Զօրան. երբ քաղաքական նկատմ-
ներ ու նախարարական ազդեցութիւն կը
խառնուին այս տեսակ դատերու մէջ, ող-
որութիւնը ու խիղճը խոյս կուտան:

ԱԶԳԱՅԻՆ

Քաղաքիս կառավարիչ փաշան նոր տար-
ւոյ առթիւ իր այցելուները զրկած էր մեր Ա-
ռաշնորդական Տեղապահ Հօր:

Կաղանդի առաւօտուն, յետ աւարտման
եկեղեցւոյ, քահանայից դասը, վարչական ժո-
վոց անդամը, դիւանատան պաշտօնէութիւնը
եւ այլ ազգայինը շնորհաւորական այցելութիւն
տուին Տ. Յակոբ Մ. վարդապետին: Գալստեան
վարժարանի աշակերտը եւ, առաջնորդու-
թեամբ հոգաբարձուաց, իրենց անդէնին,
ուսուցչաց եւ ուսուցչուհեաց առաջնորդարան
երթալով, երգեր հրգեցին. աշակերտուհի
մը ճառ մը արտասանեց՝ երախտագիտութիւն
յայտնելով Եգիպտոսի հայ բարերարներուն:
Հանգէսը փակեց Տեղապահ Հայրը՝ հակիրճ
բանախօսութեամբ մը եւ օրհնութեամբ:

Նոր Կեանքի երեւումը կողմնակէք բերկ-
րութեամբ: Այս ազգային, գրական ու քա-
ղաքական կիսամեայ հանդէս, որ տարեգը-
լէն սկսաւ հրատարակուիլ ի Լոնտոն, իրեն
նախաբան ընտրած է «Հայ ազգին վերածնու-
թեանը աշակցիլ պատմութեան եւ գրակա-
նութեան միջոցաւ ալ» եւ հայ մամուլին պա-

տիւ բերող հրատարակութիւն մըն է. առաջին
թիւը, զոր ստացանք երէկ, այս երաշխիքը
կընծայէ արդէն իր պարունակութեամբ որ
աւասիկ:

Նոր Կեանքը (Նախաբան).—Մայր Հայաստանին.
Օրօր. Բերքուած (ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ).—Ժամանա-
կակից պատմութեան էջեր. — Կ. Պոլսոյ պահպան-
դական վարչութիւնները (ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ).—
Արեւոյ Յիշատակներ (ՎԱՀԱՐՄ). — Յրաճառի ա-
րեւելեան քաղաքականութիւնը (ԼԱՎԻՍ).—Կաղանդ
Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ):

Նոր Կեանքին երկար կեանք կը մաղ-
թենք ու այն բոլոր յաջողութիւնը որուն ար-
ժանի է:

Փարոսի խմբագրութիւնը իր շնորհակա-
լութիւնը կը յայտնէ ամեն անոնց որ այցե-
տմամբ կամ հեռագրով համակրանք յայտ-
նած էին Ամանորի առթիւ:

Յառաջիկայ չորեքշաբթի Փարոս չի հրա-
տարակուիր Ծնունդի տօններուն պատճառաւ:

ՓՈՔՐԻԿ ԳԱԼՔԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԾՆՈՒՆԴԸ	
2. և վերջին Յուլյան Կոնստանտին	
Գումար Ե. ցուցակի զը. ողջ	2248 50
Տիկին Զ. պէյ Մէրամէթեան	100
Միքայէլ և Ալեքսան Գաղտառարեան	
(Խալաֆիէ)	20
Տիկին Զ. Յ. Սանտալեան (Յէյուս)	30
Տիար Յ.	30
Յ. Յ. Մ. Մանուկեան	20
Նիկի՝ ձեր բարեկամուհին	10
Միսի	10
Երուանդ Կ. Շէրիտեան	40
Տիար Մ. Յ. Հէքիմեան (Ասիոթ)	15
Օլ	20
Խմբագրութիւն Փարոսի	50

Գումար զը. ողջ 2593 50
Երկու բոլորը՝ Սիրանոյ և Մարիամ Թէրզեան
երկու զոյգ նոր կօշիկ զրկած են մեզի փոքրիկ
գաղթականներուն տրուելու համար:

ՏԵՂԱԿԱՆ

Էջպէքիէի պարտէզին մէջ կազմակեր-
պուած երկրագործական ու բուսաբանական
ցուցահանդէսը բացուեցաւ երէկ հանգիստա-
ւորապէս, Բարձր. Խորհրդին նախագահութեամբ
որ ընդունուեցաւ Հիւսէյին փաշա Քամէլի
և կարգադրիչ մասնախումբին անդամներուն
կողմէ: Ներկայ էին նախարարները, հիւպա-
տական մարմինը և ուրիշ բազմաթիւ հրա-
ւիրեալներ:

Բացումէն մէկ ժամ առաջ, Բարձր. Խո-
րհրդին այցելած էր ցուցահանդէսն և ըն-
դունուած՝ Լէաի Քրօմէրի և մասնախումբին
ուրիշ անդամուհիներուն կողմէ:

Ցուցահանդէսը բաց է հասարակութեան
առջեւ մինչեւ երկուշաբթի:

—Խորհրդական հրամանագրի մը համաձայն
որ հրատարակուած է Պաշտօնական Օրագրին
մէջ, Եգիպտոսի գաւառներու կառավարիչ-
ները իրաւունք պիտի ունենան, Սուտանի պա-
տերազմական գործողութեանց տեւողութեան
միջոցին, անոնց յատկացնել ներքին վրայ
նաւարկող բոլոր նաւերն իրենց նաւաստինե-
րով: Այս նաւեր պիտի գործածուին Ասուա-
նի հիւսիսային կողմը և անոնց տէրերուն

պիտի վճարուի պատերազմական նախարա-
րութեան կողմէ սովորաբար տրուած վարձ-
քերէն 100ին 5 աւելի:

—Թղթատարական կանոնաւոր հաղոր-
դակցութիւն մը հաստատուած է Սուաքինի
և Պէրպէրի միջեւ մէկ կողմէ և Սուաքինի
ու Քասալաի միջեւ միւս կողմէ: Հեռագրա-
կան թերթը ալ հաստատուելու վրայ են:

—Վերջերս մեռնող Սայիտ Թօսուն փա-
շայի կնոյ, որ ամերիկացի է, ու միւս ժա-
ռանգորդներուն միջեւ ժառանգական դատ
բացուած է:

—Ալեքսանդրիոյ խառն դատարանը դա-
տապարտեր է Ռամէի երկաթուղւոյ վար-
չութիւնը 30,000 ֆրանք վճարել հանգույ-
եալ Յակոբ Պաղտալեանին ընտանեաց:

Կը յիշուի թէ այդ խեղճ երիտասարդը
ասկէջ մէկ ու կէս տարի առաջ երկաթուղ-
ւոյ արկածի մը զոհ գնաց Պալքէյի կայա-
րանին մօտ:

ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ՓՈԽ-ՀԻՊԱՏՈՍԱՐԱՆ ՌՈՒՍՈՅԻՆ Ի ԳԱՀԻՐԷ

Ա Զ Դ	
Քաղաքային Օրինաց Կանոնագրին Ժ. հաստի Ա. մասին 1239րդ յօդուածին համեմատ, ստորագրեալը կը հրաւիրէ Գահիրէի մէջ 1897 ղեկեմբեր 11/23ին վախճանեալ, ռուսական հպատակ Պօղոս Կարապետ- եանի ժառանգորդները եւ պահանջատերերը ներկա յացնել իրենց վաւերագրերը քուակաւէս մինչեւ վեց ամիս: Այս պայմանագրով լրացաւ, որեւէ պա- հանջում չպիտի ընդունուի:	
Ռուսական փոխ-հիւպատոս Ա. ԻՎԱՆՕՅ	
Գահիրէ 22 դեկտեմբեր 1897 3 յունվար 1898	

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
Կիրակի գիշեր Ապու խալիլ թատրոնին մէջ
Ներկայացում մը պիտի տրուի ի նպատակ հայ դերա-
սանական խումբին առաջին կատարելագոյն Պ. Վար-
ժապետեանի:
Պ. Վարժապետեան թրեանցի պակտը անըն-
մարելի ընելու գովելի փորձեր կընէ, հետեւաբար
չենք կարծեր որ հասարակութիւնը զանազ իր
բաշխարհութիւնը, մանաւանդ որ ընտրուած խաղը՝
Առաքինի Զինուորը կատարելագործիւն մըն է շահե-
կանութիւնով լեցուն:

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ՀՐԱՇԱԼԻ ԳԻՒՏ ՄԸ
Ներքտրականութենէ, միջրոպարանու-
թենէ շատ աւելի կարեւոր գիւտ մը ըլլած է
Վիէնայի բժշկական համալսարանի բուֆէ-
սօրներէն Տօքթ. Շէնը:
Այսուհետեւ հայր ըլլալու փափագողնե-
րը պիտի կրնան ըստ հաճոյս — իբրեւ թէ
խնդիրը տուրքի վրայ ըլլար — մանչ կամ
աղջիկ զաւակ ունենալ:

Եւ ասոր համար ո՛չ բժշկական գործու-
ղութեան ոչ ալ անհնարին միջոցներու պէտք
է գիմել: Պարզապէս շիշ մը դեղ պիտի տըր-
ուի յղի կնոյ մը. եթէ մանչ կուգէ՝ այս ինչ
դեղը, եթէ աղջիկ՝ միւսը:

Այս լուրին մէջ «Փանթէզի» գործ չու-
նի, ընդհակառակը ամբողջ գիտական աշխար-
հին մէջ մեծ աղմուկ հանած է որուն ելքը
պիտի չի մոռնանք իմացնել մեր ընթերցողնե-
րուն:

ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆ ՄԸ
Գերման բժիշկ մը, Տօքթօր Շվարձ, եր-
կար և խղճամիտ ուսումնասիրութենէ մը ետքը
բժշկական հանդէսի մը մէջ կը յայտարարէ
թէ ամուսնութիւնը գլխաւոր պայմաններէն
մէկն է երկարակեցութեան:
Քառասուն տարեկանին հասնող երկու
հարիւր մարդոց մէջ հարիւր քսանը հինգը

ամուսնացած են և եօթանասունը հինգը ամուսնի . վաթսուն տարեկան եղող եօթանասուն անձերու մէջ քառասունը ութը ամուսնացած են և քսան երկուքը ոչ . և այսպէս համեմատութիւնը կը շարունակուի մինչեւ ինըսուն տարեկան եղողներուն համար :

Թերեւս առարկուի թէ Տօթ. Շվարձի հաշիւը տարբեր կերպ չէր կրնար ըլլալ . քանի որ ամուսնանալու սովորութիւնը աւելի ընդհանրացած է երկրագնդի վրայ քան թէ ամուսնի մնալու . . . խեղացութիւնը այս առարկութեան փոխարէն գերման սօթթօրը պիտի պատասխանէր մարդահամար և հաշիւ ի ձեռին թէ ամուսններու աշխարհին մէջ մահը 0/0ին 27ն է, իսկ միւսնոյն տարիքը ունեցող ամուսնացածներուն մէջ 18 առ 0/0 :

Հետեւաբար կատարած չի կայ, այս թուանշաններու առջեւ խոնարհելու է և պէտք է ընդունինք թէ երկար ատեն ապրելու համար կարգուելէ զատ ուրիշ ճամբայ չի կայ : Եւ եթէ անպատճառ կուզէք 100 տարի ապրիլ, նորէն ամուսնացէք որովհետեւ հաստատուած է թէ հարիւրամեաներուն մէջ երբեք կարելի չէ ամուսնի մը գտնել և ոչ ալ ամուսնացած մը . . . այլ պարհներ :

Այս հաշիւով, եթէ երկար ապրելու համար անպատճառ կարգուելու է, մենք ալ մեր կողմէ կրնանք աւելցունել թէ — առանց Տօթ. Շվարձի գիտնի մնաս բերելու — անմահանալու համար ալ երկու կին առնելու է :

Եւ ասիկայ չըլլալէ բան չէ, որովհետեւ քանի որ որեւէ մէկը կրնայ երկու կնկան և զոյգ մը զըքանչի գիմանալ, տանց քով մահը անյաղթելի ըլլալու բնութիւնը չունի :

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տիկին Շառլօթ Սմիթհ, ամերիկուհի մը, Ամուսնական Դաշնակցութիւն մը հիմնած է Նիւ Եօքքի մէջ :

Ամուսնութեան այդ առաքելութիւնը, ազերսազրով մը կառավարութեան աշակցութիւնը խնդրած է իր այդ ձեռնարկին մէջ և ծրագիր մը ներկայացուցած է որուն քանի մը գլխաւոր կէտերը կը թարգմանենք .

Ա. Երկու սեռէ ամեն անհատներ, օրէնքով ստիպուած ըլլան ամուսնանալու :

Բ. Ամուսնական նախարարութիւն մը ըստեղծել ինչպէս կան արտաքին և ներքին գործոց, երմտական և հանրօգուտ շինութեանց նախարարութիւններ :

Գ. Կառավարական պիւտճէին մէջ գումար մը յատկացնել աղքատ աղջիկները կարգելու համար :

Դ. Այն ամեն հարուստ մարդիկ որոնք ամուսնի մնալ կը սիրեն, ստիպուած ըլլան կառավարութեան վճարել տուրք մը որուն գումարը հաւասար ըլլայ ընտանիք մը ապրեցուներու համար անհրաժեշտ եղող գումարի մը :

Ե. Աղքատ բայց ամուսնանալ չուզողները բանտարկութեան դատապարտել :

Ինչպէս կը տեսնուի, աշխարհիս չորս կողմէ մեծ ճիգեր կը թափուին ամուսնութիւնները շատցնելու համար, ինչ որ ենթադրել կուտայ որ տունը մնացած աղջիկներուն թիւը վտանգաւոր համեմատութիւն մը առած է :

PASCHAL & C^{IE}

C. G. MEIMARACHIS & C^{IE}
SUCCESEURS

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆՑ
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՄԵՆԷՆ ԲՆԴԱՐՁԱԿԸ

ԲԱՍՓԱԼ ԵՒ ԸՆԿ.

Գ. Ճ. ՄԵՅՄԱՐԱՔԻ ԵՒ ԸՆԿ, ՅԱԶՈՐԴԲ
ԳԱՀՈՒԷ ԷՕԶՊԷՔԻԷ ԳԱՀՈՒԷ

Ձմեռնային նորաձեւութեան մետաքսեղէններու, բրդեղէններու և այլ այս կարգի ապրանք մեծ և բազմատեսակ վաճառում : Բարիզեան վերջին ճաշակով պատրաստուած գլխարկներու յատուկ վաճառարան և մետիսդներու վերաբերեալ նիւթեր :

Ն Ո Ր Ժ Ի Ի Ղ

Անգլիական և ֆրանսական ասուեղէններու ինչպէս դերձակներու վերաբերող ապրանքներ :

ՔՐԻՍԹՕՅԼԻ ԱՐԾԱԹԵՂԷՆՔ

Մեծ մթերանոց սեղանի սպասներու և խոհանոցի առարկաներու :

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՏՈՒՆԵՐԸ ԿԸ ՅԱՆՉՆՈՒՆ

Մեծաքանակ գնողներու մասնաւոր գեղջ 9—10

ԳԱՐԹԱԼԻ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ

Պոլսէն յափառու բերել տուած այս սեղանի համար անառաք գինի կը ծախուի Երուսաղէմի Պօլսեան խանութը ի Պազար Մուրուր քիւ 42. Գանձիւ ուր կը գտնուի նաեւ զուտ եւ պատուական օղի : 16—16

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններու հագուստներ. ԿՍՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, շրջագեղատներ, ևն. մաքրութիւն, ճշգրտագնութիւն, և խիստ չափաւոր գին : 13—24

Տ Պ Ա Ր Ո Ս

“ՓԱՐՈՍ” ԼՐԱԳՐԻ

ԿԸ Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Ի Ն

ԱՄԵՆ ԼԵԶՈՒԷ ՇՐՁԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԴ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՅԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԽ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութով կը կատարուին :

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցեխարտերու եւ տոմարերու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ օգոստոսի, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7 :

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱՒԱԳԵԱՆ

ԳԱՀԻԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ, ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն դործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիներով : Դեղագիրները ամենայն խնամօք և ուշադրութեամբ կը պատրաստուին :

Անգլիական և ֆրանսական արեւիալիքներ : Թարմ հանգալիք ջուրեր, անուշահոտութիւններ, բնալուծական և մանրագլխաւոր քննութիւններ : Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծանօթ բժիշկներ :

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար : 19—50

Ս. ԹԵԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՎԱՃԱՌԱԿԱՆ-ԴԵՐՁԱԿ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՄ, Յ ԹԵՎԺԻԳ ՎԱՇԱՓՈԳ

ՇԱՆՈՒՆ ՎԱՃԱՌԱՏԱՆ ԴԵՄ

Կերպաններու զանազանութեամբ ու ընտրութեամբ և ձեւի ու ճաշակի կատարելութեամբ այս տան դիմող յաճախորդները գոհ պիտի մնան թէ պատրաստուած հագուստներէն և թէ գիններու չափաւորութենէն :

Դիւրամատչելի պայմաններ : 4—4

ՖՕԹՕԿՐԱՅԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԵՐԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՄԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիներով :

Ամեն մեծութեան ԱՆՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐԻ : 2—10

Ա ԼԷԹՈՒԱԼ

Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍՅՈՐ Վաճառատունէն Տեարք Յովակիմեան Երարք այս անգամ հաստատուած են ի Գահիրէ և Մուսիի փողոյք : Լաթէսի գոհարավաճառատան զիմաց բացած են վաճառատուն մը ուր կը ծախուին բրդեղէն և բամբակեղէն ֆանելա, գուլպայ և դանդան տեսակ ընտիր շապիկներ, օձիքներ, բեւեղներ :

Ճօրս դանդանութիւն մարօքներէի, հոսեղէններու և արդուզարդի վերաբերեալ ամեն տեսակ ապրանք : Շեֆիլի հաշակաւոր պողոտանոց գործիներ, ածելի, մկրաս, զմեղի ևն :

ԱՊՐԱՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՅԵԼԻ ԳԻՆԵՐ : Գաւառներէն եկած յանձնարարութիւնք ճշգրիտ և փութով կը կատարուին : 16—24

ՄԻ ՄՆԱՔ ԵՐԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՑԻ

Քանի որ միմիայն 22 դրուէի անհուսալի գնոյ մը փոխարէն, նիքէյ, կոթէյ լարուղ, ընտիր ծամացոյցներ կը վաճառուին Սեփիական մթերանոցի մէջ, ի նաեւ խալիլ փողոյ (Ոսկերչայ շուկան) ձէվաշիք վէքեալէի մէջ :

Սեփական մթերանոցի մէջ կը գտնուին նաեւ ամեն ճաշակի և ամեն բակի յարմար, ոսկի, արծաթ, ոսկեպատ և նիքէլ ծամացոյցք, շրթաք և գոհարեղէնք ինչպէս նաեւ պատի և քոնսլի բաղադան բանտիւններ : 11—12

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Լրագրի